ԵԴ2/8775/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21.06.2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանը (այսուհետ՝ Դատարան), քննարկելով «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության տնօրեն Ալբերտ Ասատրյանի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության տնօրեն Ալբերտ Ասատրյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով 05.05.2023թ.-ին հայտարարված թիվ «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2023թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության 1.2-րդ և 2.1-րդ կետերով կայացված՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու, նույն արձանագրության 2.2-րդ կետով «Սմարտ Աուդիտ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումները անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը դատարանի գրասենյակ է մուտքագրվել 13.06.2023թ., իսկ դատավոր Ա. Շիլաջյանի աշխատակազմին է հանձնվել 14.06.2023թ.:

Դատավորի աշխատակազմը հաղորդակցության միջոցով 19.06.2023 թվականին տեղեկացրել է հայցվորին հայցադիմումում առկա թերության, մասնավորապես՝ հայցադիմումում որպես հայցվոր նշված «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արթուր Ասատրյանի էլեկտրոնային փոստի հասցեի բացակայության մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել այն:

20.06.2023 թվականին հայցվորը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1.2-րդ կետով սահմանված կարգով վերացրել է նույն հոդվածի 1.1-ին մասում նշված հայցադիմումում առկա ձևական թերությունը (հիմք՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության տնօրեն Ալբերտ Ասատրյանի կողմից ներկայացված թիվ Մ-16645/23 դիմումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ դատարանը գտնում է, որ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության տնօրեն Ալբերտ Ասատրյանի կողմից ներկայացված հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեն կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով և 27.2 գլխով նախատեսված հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության տնօրեն Ալբերտ Ասատրյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «ՀՀԷԿ-ԳՀԾՁԲ-23/2» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. ՀՀ քաղաքաշինության կոմիտեն իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**